# ՑՈՒՑԱԿ
# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

### № 533
### ՀՈԳԵՒՈՐ ՔԱՐՈԶՆԵՐ

**Թերթերը՝** 74։— **Պրակները՝** 5, անկանոն։— **Մեծությունը՝** 22×17.7×1.3 սմ.։— **Նյութը՝** գծավոր, դեղնած հաստարակ թուղթ։— **Կազմը՝** կապույտ թղթով ծածկված բարակ ստվարաթուղթ։— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հաստարակ թուղթ։— **Վիճակը՝** բավարար։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 1բ—2բ, 56բ։— **Տողերը՝** 24—26։— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է։— **Գիրը՝** շղագիր։— **Զարդագրություն՝** չունի, սակայն 2բ թերթում կա հեղինակի լուսանկարը։— **Գրիչը՝** Հարություն Ս. Նաշալյան (ծն. 1878 Մարաշում)։— **Ժամանակը՝** 1940 թ.։— **Վայրը՝** Բեյրութ (Լիբանան)։ —**Ծանոթագրություն՝** սույն ձեռագիրը հեղինակը Դամասկոսից (Սիրիա) ուղարկել է Մայր Աթոռ 1960 թ. ապրիլի 15-ին։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա.— Հեղինակին համառօտ կենսագրականը։
Թ. 4ա.— Ի՞նչ է հաւատքը։
Թ. 6ա.— Յոյսը։
Թ. 8ա.— Երջանկութեան տենչը։
Թ. 9բ.— Ի՞նչ է ճշմարտութիւնը։
Թ. 10բ.— Կեանքի ճամբորդութիւնը։
Թ. 12ա.— Զոհողութիւն և ծառայութեան ոգին։
Թ. 13բ.— Ես եմ բարի հովիւը։
Թ. 14ա.— Ժառանգս գեղեցիկ է։
Թ. 15ա.— Այսօր Աստուծոյ լսել։
Թ. 15բ.— Լոյսը։
Թ. 16ա.— Դուք էք երկրիս աղը։
Թ. 17բ.— Գիտութիւն և կրօնք։
Թ. 18բ.— Գիտութիւն և կրօնք։
Թ. 19բ.— Նկարագիր։
Թ. 20բ.— Սիրտով մաքուր ըլլալ։
Թ. 21բ.— Ո՞ւր ես Ադամ։
Թ. 22բ.— Դուք կատարեալ եղէք։
Թ. 23բ.— Աւելի կեանք ունենալ։
Թ. 24բ.— Հայր մեր որ երկինքն ես։
Թ. 25ա.— Աստուածաշունչը։
Թ. 26բ.— Հնազանդութիւն։
Թ. 27բ.— Մարդ ինչո՞ւ Աստուած կը փնտռէ։
Թ. 28ա.— Բարոյական քաջութիւն։
Թ. 28բ.— Բարեգործութիւն։
Թ. 30ա.— Սրտով կոտրածները կը բժշկէ։
Թ. 31ա.— Ուղղամտութեամբ քալողը։
Թ. 32ա.— Սէրը։
Թ. 32բ.— Յարութեան Սբ. Զատիկը։
Թ. 33բ.— Իմ անձս ուժովցուցիր։
Թ. 35ա.— Կամքը։
Թ. 36ա.— Հայ Եկեղեցին։
Թ. 38ա.— Ազդեցութիւն։
Թ. 41ա.— Դաստիարակութիւն։
Թ. 44ա.— Յ(իսու)ս Ք(րիստո)սի Ս(ուր)բ Ծնունդը։
Թ. 47բ.— Բանախօսութիւն։ Տօն հայ գրի և ս(ուր)բ Թարգմանչաց։
Թ. 48բ.— Բանախօսութիւն։ Տօն Վարդանանց զօրավարաց։
Թ. 49բ.— Բանախօսութիւն։ Անհնազանդութիւն։
Թ. 51բ.— Բանախօսութիւն։ Հայրենիք։
Թ. 53ա.— Մարդկային ցաւերը։
Թ. 57ա.— Մեծ պահքի խոհեր։
Թ. 58բ.— Մեծ պահքի 7 շաբաթներուն նշանակութիւնն ու ապաշխարութեան քարոզները։
Թ. 62ա.— Աստուած գտնող չքաւոր մարդը (Իրական կեանքի դրուագ մը)։
Թ. 64բ.— Մեր Փրկչին Յս. Քս.ի հրաշափառ Յարութիւնը։
Թ. 66ա.— Յարգանք մայրերու։
Թ. 69ա.— Հաւատքը, յոյսը և մահը։

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե--Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№ Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի №№ Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի №№ Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի №№ Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի №№ Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի №№ Գ—Ժ-ից, 1978 թվականի №№ Ա-ից, Դ-ից, 1979 թվականի №№ Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի №№ Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից և 1981 թվականի №№ Ա—Դ-ից և Է-ից։

Թ. 70ա.— Սուրբ առաքեալներուն մարտիրոսութիւնը:

Թ. 71ա.— Հայ Եկեղեցւոյ Սբ. Խաչի տօները և իմաստները:

Թ. 72բ.— Բարեպաշտ Զէյթունցիներուն ջերմեռանդ աղօթքը:

Թ. 73ա.— Զէյթունցիներուն աղօթքը:

Թ. 74ա.— Ծանկ Նիւթոց:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— Լուսոյ շաւիղէն
Հոգևոր քարոզներ
Գրեց
Յարութիւն Ս. Նաշալեան
Պէյրութ
1940 թուին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա)

Նուէր ընդհանէն այս ձեռագիր Քարոզագիրքը Սբ. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի գրադարանին:

Յրբ. Ս. Նաշալեան:

15 Ապրիլ 1960
Դամասկոս—Սուրիա:

Թ. 3բ.— (Հեղինակն իր կենսագրականի ներքև գրել է)

1954 օգոս(տոս) 15 Ն. Լ. Փ.
Դամասկոս—Սուրիա:

Թ. 66ա.— («Յարգանք մայրերու» վերնագրված գրության ներքև տրված է հետևյալ տողատակի ծանոթագրությունը)

Խօսուած է այս Ուղերձը 15 Մայիս 1960 թուին Սուրիա—Դամասկոսի Սբ. Թարգմանչաց Ազգ(ային) վարժարանի մանկապարտէզի սրահին մէջ: Տեղւոյն Տիկնանց Միութեան կողմէ սարքուած Մայրերու օրուան հանդէսին:

Յ. Ս. Նաշալեան:

№ 534
ՕՐԱԳԻՐ

**Թերթերը՝** 84:— **Պրակները՝** 4:— **Մեծությունը՝** 20.2×13.3×1.2 սմ.— **Նյութը՝** գծավոր, դեղնած թուղթ:— **Կազմը՝** սև լիտերինով ծածկված բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական սպիտակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա—11բ և 74բ:— **Տողերը՝** 27:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի, սակայն ձեռագրում կպցված են ամերիկյան զանազան թերթերից կտրված բազմաթիվ կտրոններ, որոնց մեծագույն մասը Դուրյան Սրբազանի լուսանկարներն են:— **Գրիչը՝** Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյան (1879—1933 թթ.):— **Ժամանակը՝** 1931—32 թթ.:— **Վայրը՝** Ամերիկայի Միացյալ Նահանգներ:— **Մանրապատմություն՝** ձեռագիրը ժամանակին առաքվել է ԱՄՆ-ից և պահվել Մայր Աթոռի Վեհարանի հնատիպ գրքերում: Այն տեղափոխվել է Հայրապետանոցի Ձեռագրատունը 23 Մարտի 1981 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագիրը պարունակում է նահատակ Ղևոնդ Սրբազանի ԱՄՆ-ի զանազան քաղաքներում 1931—32 թթ. կատարած հովվական այցելությունների նկարագրությունը, գրված իր ձեռքով: Մեծագույն մասը (թթ. 12ա—68բ) իր ձեռագիր գրառումներն ու տպավորություններն են, իսկ մնացյալը՝ (թթ. 69ա—84բ) հայկական և ամերիկյան զանազան թերթերի կտրոններ են, որոնք նկարագրում են Սրբազանի այդ այցելությունները: Բացի այդ ձեռագրի վերջում կան նաև թերթերի չկպցված չորս կտրոններ:)

(Ստորև տրվում է այն քաղաքների անունները ու թվականները, ո՛ր և ե՛րբ այցելել է Ղևոնդ Սրբազանը:)

Թ. 12ա.— Պոսթըն (Յուլիս 16)
Թ. 14ա.— Ուստր (Յուլիս 23)
Թ. 16ա.— Բրավիտընս (Յուլիս 30)
Թ. 18ա.— Լօվէլ (Օգոստոս 6)
Թ. 20ա.— Նիւ Պրիթըն (Օգոստոս 16)
Թ. 21բ.— Նորթ Ֆիլատելֆիա (Սեպտեմբեր 17)
Թ. 23ա.— Վէսթ Ֆիլատելֆիա (Հոկտեմբեր 23)
Թ. 25բ.— Տիթրոյթ (Նոյեմբեր 19):
Թ. 33ա.— Շիքակօ (Նոյեմբեր 27)
Թ. 37ա.— Ռէյսին:
Թ. 42ա.— Սաութ Միլուօքի (1931 Դեկտեմբեր 10)
Թ. 45բ.— Ոքէկըն (Դեկտեմբեր 15)
Թ. 48ա.— Ուէսթ Բոյմէն (Դեկտեմբեր 18)
Թ. 51բ.— Սբրինկֆիլտ (1932 Յունվար 2)
Թ. 56ա.— Նիւարք (Յունվար 17)
Թ. 58ա.— Վօթըր Թաուն (Յունվար 21)
Թ. 61ա.— Նորթ Ֆիլատելֆիա (Յունվար 31)
Թ. 62բ.— Սիրաքիւս (Փետրուար 6)
Թ. 67բ.— Պրուքլին (Փետրուար 13)
Թ. 69ա.— Վաշինկթըն (Փետրուար 19)
Թ. 71ա.— Ռիչմընտ (Փետրուար 24)
Թ. 75բ.— Թրոյ (Ապրիլ 6)
Թ. 79բ.— Գանատա (Ապրիլ 1932)

(Վերջին չորսը ձեռագիր չեն, այլ թերթերի կտրոններ)

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Առջևի կազմի ներսի կողմից գրված է)
Յով(հաննէս) Մովսէսեան
Ֆրէզնօ Քալիֆորնիա
U. S. A.

№ 535
ԵՐԳԱՐԱՆ

**Թերթերը՝** 38։— **Պրակները՝** 1։— **Մեծությունը՝** 15.7×10.2×0.5 սմ.։— **Նյութը՝** գծավոր, դեղնած բարակ թուղթ։— **Կազմը՝** կանաչավուն թղթով ծածկված հաստ ստվարաթուղթ, որի վրա գրրված է հետևյալը.

NOTES
Carnet de . . . . . .
Appartenant à . . . . . .

։—**Պահպանակները՝** չունի։— **Վիճակը՝** անբավարար— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթեր՝** չկա։— **Տողերը՝** 16—18։— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է։— **Գիրը՝** շղագիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչները՝** մի քանիսն են, որոնցից մեկը Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանն է։— **Պատվիրատուն՝** անհայտ։— **Ժամանակը՝** 1940—50 թթ.։— **Վայրը՝** շատ հավանաբար Երուսաղեմի և Ս. Էջմիածնի վանքերը։— **Ծանոթագրություն՝** երգարանն ստացված է հանգուցյալ Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանի արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագիր երգարանն ունի ոտանավորներ, երգեր, երաժշտական նոտաներ, մի քանի հասցեներ, երկու ֆրանսերեն ոտանավոր և մեկ անգլերեն գրություն։ Ստորև տրվում են վերնագրերը միայն)։

Թ. 2ա.—Jesus was pineted with cold...
Թ. 2բ.—Անտունի—Կ(ոմիտաս) Վ(արդապետ)։
Թ. 3ա.— Հնչեակ (թրգ. Վ(ահան) Թ(եքեյան) Առվէր)
Թ. 3բ.—Recueillement (Baudelaire).
Թ. 4ա.—L'Ennemi (C. Baudelaire).
Թ. 4բ.— Տղու մը—թրգ. Զ(ապել) Ա(սատուր)։ Լօժեն Մանուէլ։
Թ. 5բ.— Մեռելոց—Մ(իսաք) Մեծ(արենց)։
Թ. 6բ.—Մայրս։
Թ. 7ա.— Սուգ։
Թ. 8ա.— Աղուորները—Վ(ահան) Թ(եքեյան) 1912։
Թ. 8բ.— Զկնկուլը (Պոտլեռ)։
Թ. 9ա.— Գովասանութիւն սիրելույ։
Թ. 9բ.— Թշնամին (Պոտլեռ)։
Թ. 11բ.— Կաքավիկ (երգ Ռ. Մելիքեանի)։
Թ. 12ա.— Օրօր (երգ Ռ. Մելիքեանի)։
Թ. 12բ.— Ես բլբուլ եմ (Ռ. Մելիքեան)։
Թ. 13ա.— Հայաստան (Ց. Միրզա Վանանդեցի)։
Թ. 13բ.— Իմ երգը (բան. Յ. Թումանեան)։
Թ. 14ա.— Հով արեք (Կ. Վ.) (Կոմիտաս վարդապետ)
Թ. 14բ.— Հեյ ջան։
Թ. 15ա.— Բանակ եմ գնում։
Թ. 16ա.— Հայրենիք։
Թ. 16բ.— Հայաստանի գարունը։
Թ. 17ա.— Սարի աղջիկ։
Թ. 17բ.— Չեմ ու չեմ։
Թ. 18բ.— Թէ պաշտումի թափն ունենաս ... (18.12.46)
Թ. 19բ.— Զէյթունցիք։
Թ. 20բ.— Սիրահարը։
Թ. 21ա.— Երազ (Ս. Շահազիզ)։
Թ. 21բ.— Լուսնակ գիշեր բոլորովին քուն չունեմ ... Սիրուհիս։
Թ. 23ա.— Տեսիլ։
Թթ. 23բ—26բ.— (Երաժշտական նոտաներ)։
Թ. 26բ.— Իմ չինարի եարը (Կ. Վ.) (Կոմիտաս վարդապետ)։
Թ. 27ա.— Արօր—տատրակ։ Պարերգ (Կ. Վ.) (Կոմիտաս վարդապետ)։
Թ. 27բ— Գնա, գնա ... (Կ. Վ.) (Կոմիտաս վարդապետ)։
Թթ. 28բ—29ա.— (Այստեղ կան մի քանի հայատառ տաճկերեն քառյակներ։)
Թ. 29բ.— Գեղջկական երգ (Կ. Վ.) (Կոմիտաս վարդապետ)։
Թթ. 30ա—37ա.— (Երաժշտական նոտաներ)։
Թ. 37բ.— Մարուշկա։
Թ. 38բ.— Սարերի հովին մեռնեմ։

№ 536
ԿՈՆԴԱԿԻ ՄԱՏՅԵԱՆ

**Թերթերը՝** 68։— **Պրակները՝** 6, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ա՝ 9, Գ՝ 10 և Բ՝ 13 թերթից են։— **Մեծությունը՝** 44,5×29×2,2 սմ.։— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած ցեցակեր հաստ թուղթ։ —**Կազմը՝** քայքայված կաշեկազմ ստվարաթուղթ, որի երեսին թղթի վրա ձեռագիր գրված է հետևյալը. «Կոնդակների պատճէնը և խսկական(ն)երը սկսեալ 1909 թուականից»։— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական գունավոր հաստ թուղթ։— **Վիճակը՝** քայքայված, շատ վատ։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 1ա, 27ա, 28բ, 29բ, 30բ, 31բ, 32բ, 33բ, 34բ, 35բ, 36բ, 37բ, 38բ, 39բ, 40բ, 41բ, 42բ, 43բ, 44բ, 46բ, 47բ, 48բ, 49բ, 50բ, 51բ, 52բ, 53բ, 54բ, 55բ—58բ, 67բ—68բ։— **Տողերը՝** 49, սակայն գրությունը շատ էջերում անհավասարաչափ է։— **Գծումները՝** տըպված։— **Գիրը՝** նոտրգիր։— **Զարդագրություն՝** մատյանն ունի բավական սիրուն մեծածավալ ծաղիկների, ճյուղերի և տերևների նկարները (թթ. 13ա, 13բ, 14ա, 15ա, 15բ, 16ա, 16բ, 17բ, 18ա, 18բ, 19ա, 19բ, 20բ, 21ա, 21բ, 22ա, 23բ, 25ա, 25բ, 26ա, 27ա, 59ա, 59բ, 65ա, 66ա, 67ա), երկու տաճար (16ա), խաչ (26բ)։ Բացի այդ կա նաև երկու կնիքների ձեռագիր պատճենը, որոնք են հետևյալները. Ա. 6,7 սմ. տրամագծով կլոր մի կնիք, որի եզերքը գրված է «Կնիք հիմնա(րկութեան) Ջուղայու Ամենա(փրկչին) վանաց 1654», իսկ կենտրոնում գրված է «Տեղի կնքոյ»։ Մի քանի թերթերում կրկնվում է սույն կնիքը (թ. 37ա և այլն)։

բ. 7,1 սմ. տրամագծով կլոր մի կնիք, որի եզերքը գրված է «Կրօնական Ժողովոյ Հայոց Իրանա-Հնդկաստանի», իսկ կենտրոնում գրված է «Նոր Ջուղա—Սպահան» (թ. 43ա)։— **Գրիչը**՝ Հ. Մ. Փրչանց։— **Պատկերազարդումը**՝ չկա։ Հանձնարարող Կալկաթայի Ե-կեղեցական Խորհուրդը։— **Ստացողը**՝ նույն ինքն գրիչը՝ Հ. Մ. Փրչանց։— **Ժամանակը**՝ 1910—26 թթ.։ **Մանրա-—Վայրը**՝ Կալկաթա (Հնդկաստան)։— **Ստացումը**՝ կոնդակների սույն մատյանը Վեհափառ Հայրապետը հանձնեց Ձեռագրատանը 1976 թ. նոյեմբերի 13-ին։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատյանը բաղկացած է երկու մասից, որի առաջին մասում ձեռագիր կերպով տրված են 20-րդ դարի Ս. Էջմիածնի երեք կաթողիկոսների կոնդակների, Պարսկա-Հնդկաստանի թեմակալ առաջնորդների, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի Կրոնական Ժողովի զանազան գրությունների պատճենները, իսկ երկրորդ մասում կպցված են նույն ժամանակաշրջանի Ս. Էջմիածնի երեք կաթողիկոսների իսկական կոնդակները, հայրապետների ստորագրությամբ։

Ստորև տալիս ենք դրանց ցուցակը։

## ՑՈՒՑԱԿ

Թ. 1ր.— Մատթեոս Բ. Կաթողիկոս ամենայն Հայոց (անդրանիկ կոնդակ) 24 սեպտեմբեր 1909 թ., Ս. Էջմիածին։

Թ. 3ր.— Սահակ Արքեպիսկոպոս Այվազեան, Առաջնորդ Պարսկա-Հնդկաստանի, 28 հոկտեմբեր 1911 թ., Ջուղա—Սպահան։

Թ. 4ա.— (Նույնի պատճենը)։

Թ. 4ր.— Գէորգ Ե. Կաթողիկոս ամենայն Հայոց (անդրանիկ կոնդակ) 29 սեպտեմբերի 1912 թ., Ս. Էջմիածին։

Թ. 6ր.— Եղիշէ վարդապետ Երկաթակեցեան, Խորհրդարանի Հայոց Պարսկա-Հնդկաստանի նախագահ, 7 սեպտեմբերի 1913 թ., Ս. Ամենափրկչի վանք, Նոր Ջուղա։

Թ. 7ա.— Գէորգ Ե. Կաթողիկոս ամենայն Հայոց, 11 նոյեմբերի 1914 թ., Ս. Էջմիածին։

Թ. 8ա.— (Նույնի) 7 յունուարի 1915 թ.։

Թ. 9ա.— (Նույնի) 22 ապրիլի 1916 թ.։

Թ. 10ա.— Եղիշէ վարդապետ Երկաթակեցեան, 23 փետրուարի 1917 թ., Ս. Ամենափրկչի վանք, Նոր Ջուղա։

Թ. 10ր.— (Նույնի) 11 օգոստոսի 1917 թ.։

Թ. 11ա.— Սահակ Արքեպիսկոպոս Այվազեան, 27 սեպտեմբեր 1919 թ.։

Թ. 11ր.— Սահակ Կաթողիկոս Հայոց (Կիլիկիոյ) 25 մարտի 1920 թ.։

Թ. 12ա.— Սահակ Արքեպիսկոպոս Այվազեան (անթվակիր). (տրված է հանգանակության մի ցուցակը)։

Թ. 13ա.— (Նույնի) 27 փետրվարի 1920 թ.։

Թ. 13ր.— (Նույնի) 21 ապրիլի 1922 թ., Կալկաթա։

Թ. 14ա.— Վշտալի Գէորգ Ե., Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս ամենայն Հայոց, 1 նոյեմբերի 1923 թ.։

Թ. 15ա.— (Նույնի) 9 նոյեմբերի 1923 թ.։

Թ. 16ա.— Սահակ Արքեպիսկոպոս Այվազեան, 21 ապրիլի 1922 թ.։

Թ. 16ր.— Վշտալի Գէորգ Ե., Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս ամենայն Հայոց, 1 յունուարի 1924 թ.։

Թ. 18ա.— Եսայի Ա. ՔՀՆ. Տէր Յովհաննեանց, Միաբան Ս. Ամենափրկչեան վանաց և փոխ-նախագահ Կրօնական Խորհրդոյ թեմիս Հայոց Պարսկա-Հնդկաստանի, 20 յունվարի 1926 թ., ի Ս. Ամենափրկիչ վանս ի Նոր Ջուղա։

Թ. 18ր.— Վշտալի Գէորգ Ե., 9 նոյեմբերի 1923 .։

Թ. 19ր.— (Նույնի) 10 ապրիլի 1926 թ.։

Թ. 21ա.— (Նույնի) 5 յունիսի 1926 թ.։

Թ. 22ա.— Մեսրոպ Մագիստրոս Արքեպիսկոպոս Տէր Մովսիսեան, թեմակալ Առաջնորդ Պարսկա-Հնդկաստանի, 31 օգոստոսի 1926 թ., Ս. վանս Ամենափրկչեան, Նոր Ջուղա։

Թ. 23ա.— (Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհրդի անունից).
Անդամ Գերագոյն Հոգևոր Խորհրդի՝ Գիւտ Եպիսկոպոս
Դիւանապետ՝ Թորէն Մ. Վարդապետ
Քարտուղար՝ Ա. Քոչարեան
3 նոյեմբերի 1926 թ., Ս. Էջմիածին։

Թ. 24ա.—The Officiating Priests of the Armenian Community in Calcutta, 4th October 1926, Calcutta Armenian Church (սույն մատյանում միակ գրությունն է, որ գրված է անգլերեն)։ (Տեքստը վերաբերում է Ս. Էջմիածնում տեղի ունեցած Մեռոնօրհնության առթիվ կատարված դրամական հանգանակության մասին։ Վերջում տրված է նվիրատուների ընդհանուր ցուցակն և գումարները)։

Թ. 25ա.—Մեսրոպ Մագիստրոս Արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան, 8 մարտի 1927 թ.։

Թ. 25ր.— (Նույնի) 16 օգոստոսի 1927 թ.։

Թ. 26ա.— (Նույնի) 9 սեպտեմբերի 1927 թ.։

Թ. 29ա.— (Նույնի) 6 սեպտեմբերի 1929 թ.։

Թ. 30ա.— (Նույնի) 24 հոկտեմբերի 1929 թ.։

Թ. 31ա.— (Նույնի) 7 մայիսի 1930 թ.։

Թ. 32ա.— Մաշտոց Քահանայ Իսրայէլեան, Փոխ-Նախագահ Կրօնական Խորհրդի թեմին Հայոց Պարսկա-Հնդկաստանի (նաև երեք քահանաների անունները), 15 օգոստոսի 1933 թ., Ս. վանս Ամենափրկչեան ի Նոր Ջուղա։

Թ. 33ա.— (Նույնի և չորս քահանաների) 29 սեպտեմբերի 1933 թ.։

Թ. 34ա.— Ի դիմաց Իրանա-Հնդկաստանի Հայոց Կրօնական Խորհրդի.
Փոխ-Նախագահ՝ Թէոդորոս Ծ. Վ. Իսահակեան

Ստենադպիր՝ Համբարձում Ս. Քահ. Վարդանյանց.
1 հոկտեմբեր 1936 թ., ի Նոր Ջուղա, ի Ս. Վանս Ամենափրկչեան:

Թ. 36ա.— (Նույնի) Թէոդորոս Ծ. Վ. Իսահակեան, 7 նոյեմբերի 1936 թ.:

Թ. 37ա.— (Նույնի) Չորս քահանաների ստորագրությամբ, 1 փետրուար 1940 թ.:

Թ. 38ա.— (Նույնի) Երեք քահանաների ստորագրությամբ, 6 հոկտեմբերի 1942 թ.:

Թ. 39ա.— (Նույնի) Երեք քահանաների ստորագրությամբ, 1 յունիս 1944 թ.:

Թ. 40ա.— Վահան Եպիսկոպոս Կոստանեան, թեմակալ Առաջնորդ Հայոց Իրանա-Հնդկաստանի, 5 դեկտեմբերի 1947 թ., ի Ս. Վանս Ամենափրկչեան, ի Նոր Ջուղա:

Թ. 41ա.— (Նույնի) 1 ապրիլի 1949 թ.:

Թ. 42ա.— Փոխ-Նախագահ Կրօնական Խորհրդի Հայոց Իրանա-Հնդկաստանի՝ Ներսէս ա. քհյ. Դաւթեան, Նախանդամ՝ Կարապետ ա. քհյ. Թումիկեան, ի Ս. վանս Ամենափրկչեան, Նոր Ջուղա—Սպահան, 11 ապրիլի 1953 թ.:

Թ. 43ա.— (Նույնի) Փոխ-Նախագահ՝ Կարապետ ա. քհյ. Թումիկեան, անդամք՝ Խորէն քահ. Կիրակոսեան, Տրդատ քհն. Յովակիմեան, 26 նոյեմբեր 1956 ամի:

Թ. 44ա.— Վազգէն Ա., Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, ի վանս սրբոյ Էջմիածնի, 13 դեկտեմբերի 1958 թ.:

Թ. 45ա.— (Նույնի) 25 ապրիլի 1960 թ.:

Թթ. 59ա—65ա.— Սահմանադրութիւն վասն վարչութեան գոյից և գործառնութեանց եկեղեցեացն հայոց ի Կալկաթա և ի Չինսուրա և մատակարարութեան պարգևաց և նուիրաց, պատրաստական դրամոց, և ողորմածական տրոց պատկանելոյ կամ վերաբերելոյ նոցին կամ մատակարարեալ պաշտօնէութեան նոցին:

Թ. 65բ.— (Ծարունակելի):

Թթ. 66ա—67ա.— Դատավարութիւն համար 413 յամի 1888, ի Բարձրագոյն ատենին դատից ի փորթ Վիլլիըմ ի Բէնգալ:

## ՏՊԱԳԻՐ

(Կոնդակների բնագրերը կցված են այս էջերում)

Թթ. 46ա և 47ա.— Գէորգ Զ., Կաթողիկոս Ամենայն հայոց (անդրանիկ կոնդակ), 1 ապրիլի 1946 թ., Ս. Էջմիածին (աշխարհաբար):

Թթ. 48ա և 49ա.— (Նույնի) անդրանիկ կոնդակ, 1 ապրիլի 1946 թ., Ս. Էջմիածին (գրաբար):

Թթ. 50ա և 51ա.— Վազգէն Ա., Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, հմր. 104, 20 դեկտեմբերի 1957 թ., Ս. Էջմիածին:

Թ. 52ա.— (Նույնի) հմր. 440, 12 մարտի 1962 թ., Ս. Էջմիածին:

Թթ. 53ա և 54ա.— Խորէն Ա., Կաթողիկոս Ամենայն Հայոց (անդրանիկ կոնդակ), 1 յունիսի 1933 թ., Ս. Էջմիածին:

Թ. 55ա.— Վազգէն Ա., Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, հմր. 171, 25 ապրիլի 1960 թ., Ս. Էջմիածին:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 67ա.— Թարգմանեալ յԱնգլիերէնէ ի Հայ բարբառ: Վերջ: Յ. Մ. Փրեանց—14/5/26:

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Ստենադպիր Սարգիս Նազար:

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Բազմաթիվ թերթերում (թթ. 1բ, 3բ, 4ա, 4բ և այլն) լուսանցքում թեք կերպով գրված է ճշգրիտ թվականը երբ եկեղեցում կարդացվել է նշված կոնդակը կամ գրությունը:

## № 537

## ԿՈՆԴԱԿԻ ՄԱՏՅԵԱՆ

**Թերթերը՝** 98:— **Պրակները՝** 4, անհավասար քանակով, Ա՝ 34, Բ՝ 22, Գ՝ 26 և Դ՝ 16 թերթից են:— **Մեծությունը՝** 37,7×26,3×3,2 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած ցեցակեր հաստ թուղթ:— **Կազմը՝** քայքայված կաշեկազմ ստվարաթուղթ, որի երեսին թղթի վրա ձեռագիր գրված է հետևյալը. «Պատճէն կոնդակից», իսկ ներսում ոսկեգույն տըպված է հետևյալը «Vol. IV, Bombay acts, 1898—1908»:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական բարակ գունավոր թուղթ:— **Վիճակը՝** քայքայված և շատ վատ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Տողերը՝** անկանոն, 38—41:— **Գծումները՝** մատիտով քաշված գծեր:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** ձեռագիրն ունի քիչ թվով զարդագրություն, բոլորն էլ գծված հասարակ ոնով: Կան կաթողիկոսական կնիքների գծագրություններ, Էջմիածնի վանքը, գմբեթ, վանականներ, ոչխար (1ա, 47ա, 64բ, այս վերջինս գունավոր է, ջրաներկ երեք գույնով), ինչպես նաև մեծ զարդագրեր (14բ, 16բ), մեծ թռչնագրեր (90ա, 91ա, 94բ, 97ա):— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** շատ հավանաբար Կալկաթայի Եկեղեցական Խորհուրդը:— **Ծաղկողը՝** անհայտ, հավանաբար գրիչը լինի:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** Կալկաթա:— **Ծանոթություն՝** կոնդակների արժեքավոր սույն մատյանը Վեհափառ Հայրապետը Ձեռագրատուն հանձնեց 1976 թ. նոյեմբերի 13-ին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրը հանդիսանում է Կալկաթայում ստացված Ս. Էջմիածնի կաթողիկոսների կոնդակների, Երուսաղեմի պատրիարքների և Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի վանահայրերի գրությունների պատճենները, որոնք պատկանում են 19-րդ դարի

առաջին կեսին։ Թերթերից մի քանիսը ժամանակի ընթացքում մեծապես տուժել և քայքայվել են, որով դարձել են անընթեռնելի։ Ստորև տալիս ենք տեղեկություններ մնացած ընթեռնելի թերթերի մասին, ապա կոնդակի կամ գրության հեղինակի անունը, գրության թվականը և վայրը։

Թ. 1ա.— Յի. Քի. ծառայ Տէր Դաւիթ որդւ շնորհիւն կաթողիկոս...

Թ. 3ա.— Գրեցաւ ի 1803, և ի յունվարի 3-ին ի Մայր Աթոռս սմ. հայոց ի Սուրբ (Էջմիածին)։

Թ. 6ա.— Գրեցաւ օրհնութեան, աղաչանաց սիրոյ Ընծիրակութեան և հրաւիրակութեան գիրս ի հազար երկու հարիւր յիսուն և երկու (1803 թ. —Ն. Մ.) մերս Հայկազեան թուոյ և յուլիս ամսոյ սկզբան, ի վայելչազարդ մայրաքաղաքս Սր. Երուսաղէմ. ընդ հովանեաւ Սրց. մեծաց առաքելոցն Յակոբեանց գերահռչակեցելոյ Աստուածադիր և Գերապան Աթոռոյս սմ. հայոց։

Թ. 7ա.— Գրեցաւ ի դրանն Սրյ. Ամենափրկչի վանքս ի թուըս ՌՄԾԲ (1803 թ.— Ն. Մ.) և Դկյ յամսեանն ԻԸ-ին, ի Նոր Ջուղայ։

Թ. 10բ.— Գրեցաւ նուիրաժողովութեան կոնդակս ի թուին հայոցս ՌՄԾԵ-ին (1806 թ.—Ն. Մ.) Ապրէլի Ե-ին ի շնորհաբաշխ և խնդրակատար Դրան Սր. շիրմի մեծի Մկրտչին, ի Մուշ, որ ի Տարօն գաւառին։

Թ. 11ա.— Գրեցաւ ի Սրյ. Ամենափրկչի հռչակապատուած վանք. յամի ՏՆ. 1807 Յունվարի 11 ի Նոր Ջուղայ։

Թ. 12ա.— (Նոյն վանքից) 1808 յամսեանն մրտի. 4-ին։

Թ. 13ա.— (Նոյն վանքից) ՌՄԾԹ (1810 թ.— Ն. Մ.) յամսեանն Նոյեմբերի ԻԲ-ին վերջ։

Թ. 14ա.— Գրեցաւ ի վանս Սրբոյ Ամենափրկչին մերոյ յամի Տեառն 1808 ամսեանն մայիսի 29-ին, ի Նոր Ջուղայ, գաղափարս նախայ գաղափարին հաստատուն տեսինք Բմբյու (Բոմբէյ—Ն. Մ.) վճռակի հայոց քննչ. Տէր Եղիազար Իսջիլդին

Գրիգոր Յովհաննէսեանն
Յովսէփ Յարութիւնեան
Մարտիրոս Տէր Ստեփաննոսեան
Յարութիւն Սահակեան
Յովսէփ Միքայէլեան
Կոստանդ Տէր Պետրոսեան
Վարդանէս Սիմէօնեան
Ստեփաննոս Մովսէսեանն
Գրիգոր Տէր Յովհաննէսեան։

Թ. 15ա.— (Նոյն վանքից) 1803 թ. մարտի 30-ին։

Թ. 16ա.— (Նոյն վանքից) 1803 թ. ապրիլի 6։

Թ. 17ա.— (Նոյն վանքից) 1808 թ. մարտի 20։

Թ. 19ա.— (Նոյն վանքից) 1808 թ. փետրվարի 20-ին։

Թ. 20բ.— (Նոյն վանքից) 1808 թ. մարտի 24։

Թ. 22բ— (Նոյն վանքից) 1810 թ. յուլիսի 26։

Թ. 24ա.—Գրեցաւ օրհնութեան, յորդորական և խնամարկէի կոնդակս ի տնաշրջիկ և վայելչազարդ մայրաքաղաքս Սր. Երուսաղէմ. ընդ հովանեաւ սրբոց Յակոբեանց երջանկազարդ առաքելոցն մեծի և աստուածադիր Մայր Աթոռոյս ամենայն հայոց. ի թուին ՌՃԾԹ (1710 թ.: Ըստ հաշվումարի պետք է լինի 1810—Ն. Մ.) ապրիլ ամսոյ ԺԷ։

Թ. 25բ.— Գրեցաւ օրհնութեան, յորդորանաց և խնամարկէի կոնդակս ի թուին հայոց ... 1258 (1809 թ.— Ն. Մ.) նոյեմբերի մին մայր դրան սրբութեան Աստուածածնի հռչակազարդ եկեղեցւոյ ի պատրիարքարանս սմ. հայոց որ ի Կոստանդնուպօլսոյ (գրությունն Հովհաննես Պատրիարքի)։

Թ. 27ա.— (Եփրեմ Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը) Գրեցաւ յամի Տեառն 1810 և հայոց ՌՄԾԹ Դ եղև Դեկտեմբերի, առ դրան գերագահ Աթոռոյ Կաթողիկէ եկեղեցւոյ սրբ. Էջմիածին։

Վասն ձեր ջերմեռանդ աղօթարար
Եփրեմ Կաթողիկոս սմ. հայոց։

Թ. 29ա.— (Դանիել Կաթողիկոսի կոնդակը) Գրեցաւ ի ՌՄԾԶ (1807 թ.— Ն. Մ.) թուոյս, և ի Հոկտեմբերի 20 առ դրան յուսակառոյց և տիրակերտ մեծի Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի։ Դանիէլ Կաթողիկոս. սմ. հայոց Սրյ. Էջմիածնի որ ձեռագրեցի վս. յատուկ սիրոյս խնդ որ առ ձերդ յարգա[թ]ի[ւն]։

Թ. 29բ.— (Նույնի) 1807 թ. սեպտեմբերի 4։

Թ. 31բ.— Գրեցաւ յամի ՏՆ. 1812 և հայոց ՌՄԿԱ ի մարտի 26 առ դրան գերագահ Աթոռոյս ամենայն հայոց սրբոյ Կաթողիկէ մայր եկեղեցւոյ Էջմիածնի։

Եփրեմ կաթողիկոս վասն նախածանօթ սիրելեացդ ջերմեռանդ աղօթարար որ ի սէր խնդով ձեռամբ գրի։

Թ. 32բ.— (Նույնի) 1813 թ. ապրիլի 18-ի։

Թ. 36բ.— Ցանկ տետրակիս (այստեղ արված է 32 կոնդակների և 4 գրությունների պատճենների ցուցակը, որոնք գրված են ձեռագիր մատյանի սկզբի մասում նախապես համարակալված № № 1—87 էջերում, այսինքն թթ. 1—42-ում)։

Թ. 38ա.— (Նոր Ջուղայի վանքից) 1813 թ. յուլիսի 12-ին։

Թ. 38բ.— (Նույն վանքից) 1814 թ. մարտի 6-ին։

Թ. 39ա.— (Եփրեմ կաթողիկոս) 1814 թ. մարտի 4-ի։

Թ. 39բ.— (Նույնի) 1813 թ. օգոստոսի 30։

Թ. 40բ.— (Նույնի) 1813 թ. օգոստոսի 30։

Թ. 41ա.— (Նույնի) 1813 թ. մայիսի 30։

Թ. 41բ.— (Նույնի) 1813 թ. սեպտեմբեր 7։

Թ. 45բ.— (Նույնի) 1818 թ. փետրվարի ...։

Թ. 46ա.— (Նոր Ջուղայի վանքից) 1818 թ. հունիսի 12։

Թ. 47ա.— (Նույն վանքից) 1820 թ. մայիսի 17։

Թ. 50ա.— (Նույն վանքից) 1820 թ. նոյեմբերի 12։

Թ. 50բ.— (Նույն վանքից) 1821 թ. մայիսի 25։

(Շարունակելի)